ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզի <<Սուսերի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրինությունը հայտարարում է մրցույթ մաթեմատիկա (15 դասաժամ) ,քիմիա (6 դասաժամ), կենսաբանություն (6 դասաժամ),հայոց լեզու և գրականություն (5 դասաժամ), դասվար (17 դասաժամ), անգլերեն (16 դասաժամ), պատմություն (16 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Ուսուցչի թափուր աշխատատեղի համար մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1.Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
2.Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3.Անձը հաստատող փաստաթուղթ,
4.<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
5.Ինքանկենսագրություն(Ձև 5),
6.Այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7.ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,
8.Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9.Որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝ հավաստող փաստաթուղթ:
10. Հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում .
11. << Հանրակրթության մասին >> օրենքի 26 – րդ հոդվածի 2 – րդ մասի 1-ին կետի (առկայության դեպքում ՝ նաև 2 – րդ կետի պահանջվող համապատասխան փաստաթուղթ):
12. << Հանրակրթության մասին >> օրենքի 26 – րդ հոդվածի 2 – րդ մասի 3 – րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 14-ից մինչև օգոստոսի 27-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 29- ին ՝ ժամը՝ 14:00-ին,Սուսերի միջնակարգ դպրոցում,հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Սուսեր բնակավայր 1-ին փողոց, շենք 21:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 098780976: